№ 22. ՅՈՒՆԻՍԻ 17 (29) 1876 ՅՈՒՆԻՍԻ 17 (29) № 22.

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 բուբլ, կէս տարվանը 3 բուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція «Мшакъ.»

Խմբագրատունը բաց է առաւաւոտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից 2 կոպէկ։

ՄՇԱԿ

Լրագրի ԿԷՍ ՏԱՐՎԱՑ բաժանորդութեան գինը, յուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 31 1876 թ.՝ 3 ՐՈՒԲԼ է։ Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրատան մէջ, պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ խանութում։

Խմբագրութիւնը խնդրում է նոցա, որք դեռ չեն վճարել „ՄՇԱԿԻ“ ներկայ տարվայ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ, շուտով հասցնել նրան խմբագրութեանը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція армянск. газеты «Мшакъ».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դարձեալ ուսուցչական դպրոցի մասին։—Ներքին տեսութիւն։ Հրդեհ Զաքաթալի մէջ։ Ղամակ Երևանից։ Նամակ Մոսկվայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Քաղաքական տեսութիւն։ Թիւրքիայի հայոց մասին։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Կ. Պոլսից։ Նամակ Գերմանիայից։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։

ԴԱՐՁԵԱԼ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ

„Մշակի“ անցեալ համարում տպված „Ուսուցիչներ չը կան“ առաջնորդող յօդվածին մենք կը կամենայինք աւելացնել և հետևեալ դատողութիւնները։

Երբ 1871 թվին կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու, պ. Նեվէրով հրատարակեց իր տարեկան հաշիւը, որտեղ խօսելով Կովկասում եղած հայոց ուսումնարանների վրա, առաջարկում էր վերցնել կովկասեան հայոց հինգ թէ վեց միջնակարգ դպրոցները և նրանց ունեցած դրամագլուխը տանել Ս. Էջմիածին և գործ դնել ակադեմիայի հիմնարկութեան և պահպանելու վրա,—այն ժամանակ Ս. Պետերբուրգի „С. Петерб. Вѣдомости“ լրագրում երևեցաւ մի թղթակցութիւն Թիֆլիսից, Է. Շատ-Իրաւացի ստորագրութեամբ, որ քննելով պ. Նեվէրովի առաջարկութիւնը, այն միտքն էր յայտնում, որ հայերի համար աւելի օգտաւէտ կարող են լինել հինգ վեց միջնակարգ դպրոցներ (սեմինարիաներ) որք կը պատրաստեն ընդհանուր զարգացում ունեցող քահանաներին և վարժապետներին, քան թէ մի բարձրագոյն, խիստ աստուածաբանական ուղղութեամբ դպրոց, որ կընծայէ կովկասեան հայ հասարակութեանը վերացական կերպով զարդացած, ժողովրդի օրական պիտոյքները չը հասկացող, անգործնական ուղղութիւն ունեցող երիտասարդներին....

Համակրելով պետերբուրգեան լրագրի թղթակցի մտքերին, ահա հինգերորդ տարի է որ մենք էլ „Մշակի“ մէջ միշտ յայտնել ենք նոյն միտքը....

Ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուն այն ժամանակ պատասխանեց Թիֆլիսի թղթակցին մի երկար պաշտօնական հերքումով, որի մէջ ջանում էր ապացուցանել իր մտքերի արդարութիւնը։

Այժմ ընթերցողը կարող էր համոզվել մեր անցեալ համարի առաջնորդող յօդվածից, որ կովկասեան ուսումնարանական շրջանի վարչութիւնը այդ հինգ տարվայ ընթացքում փոխեց իր համոզմունքը։

Փորձը ցոյց տուեց պ. հոգաբարձուին որքան ուղիղ էին թէ „С. Петерб. Вѣд.“ լրագրի թղթակցի և թէ նոյնպէս հինգ տարի շարունակ „Մշակի“ մէջ յայտնած մտքերը մեր աստուածաբանական ճեմարանի մասին։

Առածը ասում է՝ „լաւ է ուշ, քան թէ երբէք“ և այդ շատ ուրախալի երևոյթ է որ մեր ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուն հինգ տարվայ ընթացքում հասաւ նոյն մտքերին, որ դեռ 1871 թ. Ս. Պետերբուրգի լրագրի թիֆլիսեան թղթակիցն էր յայտնում և որի դէմ դա գրեց պաշտօնական հերքումը։

Այժմ խօսելով պ. հոգաբարձուի օրգանների հետ, այն է նորա օգնական պ. Ժէլիխովսկու և Երևանեան նահանգի ժողովրդական ուսումնարանների դերեկտոր պ. Բօգաչեվի հետ, ափիթ ունեցանք համոզվել որ նրանք անիրագործելի են համարում մեր ակադեմիայի պրոգրամը և այդ հիմնարկութեան գոյութիւնը անգործնական և կարելի է ասել ապարդիւն են համարում,—իսկ դրանց մտքերը ի հարկէ արձագանք պէտք է համարվին նոյն իսկ պ. Նեվէրովի հայեացքների։

Եւ ճշմարիտ, մեր միջնակարգ դպրոցները, Կովկասի հայաբնակ հինգ թէ վեց քաղաքների մէջ, աւելի համապատասխան են իրանց կազմակերպութեամբ ժողովրդի կրթութեան գործի պահանջներին, քան թէ մի բարձր աստուածաբանական դպրոցի գոյութիւնը, որ ոչ գիւղական քահանաներ, ոչ էլ ժողովրդական ուսուցիչներ կարող է պատրաստել....

Այժմ մեզ մնում է միայն ցանկանալ որ այդ միջնակարգ դպրոցներից մինը դառնար ուսուցչական դպրոց, որ կարողանար մեր ուսումնարանական կազմակերպութեան գլխաւոր պակասութեանը դարման անել,—այն է ստեղծէր մեզ համար մասնագէտ ժողովրդական ուսուցիչների անհրաժեշտ տարրը։

Մասնագէտ ուսուցիչը կարող է դուրս գալ միայն մասնագիտական ուսուցչական դպրոցից (учительск. институтъ, կամ учительск. семинарія), և երբէք մեր բազմաթիւ ժողովրդական երկու սեռի դպրոցների համար այդ անհրաժեշտ տարրը մենք ստանալու չենք աստուածաբանական ճեմարանից, որքան աջող ընթացք և ունենար այդ հռչակաւոր ակադեմիան։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ ԶԱՔԱԹԱԼԻ ՄԷՋ

Քաղում ենք „Тифл. Вѣстн.“ լրագրից մի քանի մանրամասներ Զաքաթալ քաղաքի հրդեհի մասին։ Յունիսի 5-ին ժամը 2-ին կէսօրից յետոյ սկսեց այրվել հեռադրական կայարանը, որ բաւական տարածութեամբ բաժանված է քաղաքի մնացած շինութիւններից։ Քամին սաստիկ էր և չը նայելով որ իսկոյն օգնութիւն հասաւ այրվող շինութեանը, բայց քամին արագութեամբ տարաւ կրակի կայծերը քաղաքի մնացած շինութիւնների փայտեայ կտուրների վրա։ Այն օրը եկած էին Զաքաթալ շրջակայ լեռնաբնակ գիւղերի պատգամաւորներ աւելի քան 1000 թւով, իրանց գաւառի կառավարչից, պ. Շօլ-կօվսկիից հրաժարական առնելու համար։ Սրանք էլ օգնեցին հրդեհը հանգցնելու։ Բայց բոլորը ի զուր էր։ Քամին անխնայ տարածում էր կրակը, և քաղաքի երկու երրորդ մասը այրվեցաւ։ Ցները և կայքերը ապահոված չէին։ Աղքատութիւնը Զաքաթալի մէջ այժմ սարսափելի է։ Շատերը կորցրին իրանց բոլոր ունեցածը, շատերը ունևորներից ընկան վերջին աղքատութեան մէջ։ Առհասարակ վնասը հասնում է մինչև 800 հազար բուբլ դրամարը։ Գիւղական լեռնաբնակները չը բաւականացան իրանց հերոսական ջանքերով հրդեհ հանգցնելու համար, նրանք տեսնելով որքան մեծ թշուառութեան մէջ պիտի ընկնէր քաղաքը, իսկոյն գնացին իրանց գիւղերը և միւս օրը վերադարձան քաղաքը իրանց հետ բերելով հաց, հաւեր, ոչխարներ և այլ ուտելիքների պաշար։ Շատերը նրանցից տարան իրանց հետ քաղաքացիների աղքատացած ընտանիքները և բնակեցրին նրանց ձրիապէս իրանց գիւղերում։ Այդ տեսակ հերոսական օգնութիւնը ի հարկէ երկար ժամանակ տևել չէ կարող։ Զաքաթալ քաղաքը վերանորոգելու համար հարկաւոր է աւելի դրական օգնութիւն։ Լեռնաբնակները իրանք աղքատ մարդիկ են։ Հարկաւոր է որ տէրութիւնը և հասարակութիւնը օգնեն ողորմելիներին։ Յուսանք որ այրված քաղաքի բնակիչները կը ստանան կառավարութենից մի յայտնի գումար փոխարինաբար։ Իսկ առ այժմ հարկաւոր է նուիրատուութիւններով օգնել խեղճերին, նոցա օրական, այժմեան պիտոյքը բաւականացնելու համար։ Զաքաթալում կազմված է մի մասնաժողով որ նպատակ ունի հոգալ Զաքաթալցիներին ամեն հնարաւոր միջոցներով օգնութիւն հասցնելու։ Այդ մասնաժողովի նախագահը պ. Կամսարական է, որի անունով և կարելի է ուղարկել նուիրատուութիւնները։ „Тифл. Вѣстн.“ լրագիրը արդէն բայ է արել ստորագրութիւն այրվածների համար։ Մենք էլ ուրախութեամբ կընդունենք նուիրատուութիւններ։ Նուիրատուութիւնները կարելի է հասցնել նոյնպէս ուղղակի հետևեալ հասցէով՝ Въ Закаталы, ротмистру Константину Петровичу Камсаракану.

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

8 Յունիսի

Ամսոյս 5-ն պատահած հեղեղը մի սարսափելի հարուած տուեց Երևան քաղաքիս։ Իմ գրիչս անընդունակ է ներկայացնել մի հայելի, որի մէջ ընթերցողը կարողանար տեսնել այդ տարաբաղդութեան ճիշտ պատկերը.... Հեղեղը սովորականի պէս պատահեց 5½ ժամին և տևեց երկու ժամից աւել։ Ինչպէս յայտնի է «Մշակի» բազմաթիւ թղթակցութիւններից, հեղեղը յարձակվում է քաղաքի արևելեան մասից բացած մի ահագին ձորից։ Ամբողջ ջուրը այդ ձորից քաղաքին մօտենալով, երկու հղօր ճիւղերի է բաժանվում, այդ բաժանման տեղը գտնվում են այնպիսի քարեր, որոնց չատերի չրջապատը 25 քայլից աւելի է։ Այդ երկու ճիւղերից մինը յարձակվում է Դամբրուլաղ ասուած թաղի վրա, իսկ միւսը նոր բացուած չօսէյի փողոցից անցնում է քաղաքի կենդրոնով։ Ի հարկէ այդ ճիւղերն էլ արտադրում էին իրենցից բազմաթիւ փոքրիկ գիտակներ միւս երկրորդական փողոցների մէջ։ Նախ քան հեղեղի գալը երեկոյեան երեք ժամից սկսած մութ ամպեր երևեցան։ Ամբի որոտալը և անձրևի աննման կաթիլները դուշակել էին տալիս փորձուած երևանցուն նրա համար պատրաստվող վտանգը և շատերը թէ փողոցում և թէ այգիներում շտապեցին իրենց գերդաստանին օգնութիւն հասցնել, իսկ շատերն էլ անտես առան այդ երևոյթը։ Բայց ահա քաղաքի արևելեան կողմից դղրդաց երկիրը, ամեն մարդ չուարած չտապում էր դէպի իւր նուիրական առարկան. նայեցէք փողոցից դէպի վեր, որպէս մարդիկները դէս ու դէն ընկած ապաստարան են որոնում, նայեցէք այն խեղճ կնոջը ինչպէս իւր զաւակը կուրծքին սեղմած, ապահով տեղ է որոնում, բայց հեղեղը անգութ էր, նա չէր խնայում իւր զոհը, սաստիկ ուժեղութեամբ քերանը բացած վիշապի նման կուլ տալ էր ուզում ամենքին։ Նա անցնելով այգիներից ահագին ծառեր արմատից հանած, որպէս յարդի կոտր խաղացնում է իւր ալիքների վրա. անասուններ, տան կահ կարասիք, չինութեան համար բերուած փայտեր ջրի կատաղի մակերևոյթի վերայից թռչում էին մարդու աչքի առաջ...սորա առաջը առնելու համար չը կար ոչ մի հնարք՝ ամեն մարդ իւր անձի համար էր մտածում, միւս բաները յանձնում էր նախախնամութեան կամքին։ Հեղեղը երկու ամբողջ ժամ քաղաքը աւերելուց յետոյ, ջուրը փոքր առ փոքր սկսեց նուազել, փողոցում մնացող մարդիկները չղթայանման շարուած, առողջը տկարին չալակած, անցնում էին փոքր ինչ հանդարտուած ջրի վրայից.... Այսպէս հեղեղը փոքր առ փոքր սկսեց նուազել բայց նորա տուած վնասի առթիւ չէր կարելի կազմել մի յայտնի գաղափար, վասն զի արեգակը, այդ ժամանակ մայր մտաւ։ Առաւօտը, կիւրակէ էր. բայց եթէ դուրս գայիք փողոց, դուք կը տեսնէիք մարդիկները խումբ խումբ կազմած այս և այն տուն էին մտնում, սորա և նորա վշտալի դրութիւնն էին նայում։ Դամբրուլաղ, Շինթաղ, և Շահար թաղերում կան տներ որոնք բոլորովին ոչնչացած են, չատերի ներքի յարկը տղմախառն ջրով լցուած է, որքան մթերք և պարագաներ նորա մէջ ոչնչացած են. անկողին, կաթսայ, գորգեր և հաղարաւոր իրեղէններ դուրս են հանում ցեխի տակից. տան ներքի յարկը խախտուած լինելով, ի հարկէ վտանգաւոր է և վերևումն ապրելը. չատերին այնպէս է հարուածել որ նորա բոլորովին հրաժարվել են աշխատութենից՝ ձեռքերն կուրծքին ծալած ողբումեն իւրեանց դառը վիճակը։ Բայց աւելի ցաւալի պատկեր ներկայացնում էր քնքոյշ սեռը՝ ահա մի աղջիկ, կարծես դա այլ ևս չէ զգում օտար մարդի երեսին չը կանգնելու արեւելեան քաղաքավարութիւնը, ձեռքերը կուրծքին խաչած, անմեղ աչքերը լի արտասուքով, մնաս բարև է ասում իրեն բոլոր առարկաներին. արդեօք ինչ է արել այդ խեղճը, որ Աստուած նորան պատժել ուզեց.... Մի քանի մարդիկների ակատաես եղանք որոնց ջուրը գլորում էր, բայց որք բարեբաղդաբար ազատուեցին հեղեղի բերած ահագին քարերի վրա ապաստան գտնելով։ Շատերը այսօր ջարդուած ու փշրուած անդամներով պարկած են տներում։ Պողոս-Պետրոս եկեղեցին ուր նախկին հեղեղների խռնաւութիւնից հոտը դեռ ևս բուրում էր նրա յատակից, դարձեալ ենթարկվեց այդ վիճակին, մի քանի դատարաններ նոյնպէս վնասված են. դատարանների մէջ պաշտօնական թղթերը ցիսի հետ չաղախուած են։ Ամբողջ քաղաքից միայն Կոնդ և Զորագիւղ թաղերն են ազատ, իսկ, Շահար, Խանքաղ, Դամբրուլաղ և Շինթաղ թաղերը՝ դրա բոլոր վնասված են հեղեղից։ Ես կարծում եմ աւելորդ է, որ ասում են քաղաքի այժմեան չօսէյի ճանապարը փոխել հեղեղի պատճառով... որտեղից և դէն, դարձեալ սպառնում է նրան հեղեղը։ Ուրեմն աւելի լաւ է շատ հաղարների տեղ որ անօգուտ է անցնելու, մի քանի հազար ևս ծախսել, և այդպէս այս քաղաքիս ժողովրդին մի ապահով դրութիւն պարգևել։

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

30 մայիսի

Առաջին նամակովս («Մշակ» 1876, № 16) յայտնելով տեղւոյս Կայսերական Բազմարվեստեան ուսումնարանի նպատակը և ուսանելի առարկայքը, այս երկրորդ նամակովս ես կը խօսեմ նոյն ուսումնարանի արհեստների մասին։

Մտնելով ուսումնարանի հանդիսատունը դժուար չէ նկատել բացի վկայականներից ու գովասանական թերթերից, և առանձին առանձին շրջանակներում ազուցված վեց ոսկեայ, չորս արծաթեայ և երկու բրօնզեայ մեդալներ, ստացված զանազան արվեստահանդիսներում,—ինչպէս Ռուսաստանի այնպէս և արտասահմանի,—ուսումնարանիս գործարաններում շինած մեքենաների համար։

Այժմ նոյնպէս մեծ պատրաստութիւն տեսնե-

լուց յետոյ, ուղարկվել են Ամերիկայի Ֆիլադելֆիա քաղաքի համաշխարհական հանդէսը բազմաթիւ մեքենայական գործիքներ։

Բացի ուսումնարանի մի քանի պրոֆեսորներից և գործատերի վերատեսչից, աշխարհահանդէսը ուղարկվելու են հինգ ուսանողներ վերին դասարաններից։

Պարապմունքները գործատներում սկսվում են երկրորդ պատրաստական դասատնից ուր պարապում են նախ ճախարակագործութիւնով։ Երրորդ պատրաստականում պարապում են կաղապար-ատաղձագործութիւնով (հիւսնագործութիւնով)։ Առաջին և երկրորդ ընդհանրներում, նմանապէս և առաջին գործնականում (практическій классъ) բանում են արդէն մետաղների ճախարակագործութիւնով և փականագործութիւնով (слесарное искусство.) միւս դասատների ուսանողքը պարապում են մեքենայական գործարանում և վերջապէս չուգունի և պղնձեայ ձուլանոցում (литейная)։

Գործատները, բացի ձուլանոցից, որ առանձին շինուածք է, բռնում են ուսումնարանի ներքի յարկի կէս մասը և ամեն մէկը ունի մօտ երկու—երեք հարիւր քայլ երկայնութիւն և երեսուն—քառասուն քայլ լայնութիւն։

Բոլոր գործատներում ի հարկէ գործադրված է շոգու ոյժը։

Լ. Խան-Աղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են որ այս տարվայ անընդհատ անձրևներից կարելի է յուսալ որ բերքը շատ առատ կը մնի։ Մօտ օրերս թէև մի քանի գիւղերի արտերը փչացան կարկուտից, բայց գիւղացիները ասում են, որ առատ անձրևները կուղղեն և այդ կարկտահար արտերը։

Այս տարի, ինչպէս մեզ գրում են ԹԷԼԱՒԻՑ, ձմեռվայ ցրտերի պատճառով խաղողի որթի $^2/_3$ մասը Աւգան գետից սկսած դէպի հարաւ չորացած է, իսկ Աւգանից դէպի հիւսիս՝ լաւ է։ Արտերը թէլաւի կողմերում լաւ են։ Կախէթը ազատ է մրեխից և կենդանիների ցաւերից։ Ուտելիքները դեռ ևս էժան են։ Հացի կօղը (3 պուդ) արժէ երկու ռուբլի, գարի 1 ռ. 40 կօպ., սիմինդր 1 ռուբլի։ Ոչխարի և տաւարի միսը մի ֆունտ արժէ 6 կօպէկ։ Երկու վառիկ արժէ 15 կօպէկ., 8 ձու 5 կօպ.։ Անցեալ տարվայ զինին շատ կայ և շատ էժան է։ Միայն ցաւալին այն որ այս տարի կարկուտը չուտ չուտ է կրկնվում։ Այդիներին վնաս տուեց փոփոխական եղանակը՝ ցուրտը, չոքը, երաշտութիւնը։ Ցոյս կայ որ այժմեան անձրևները կը կենդանացնեն կրկին ամբողջ Կախէթը։

Ցունիսի սկզբներում, ինչպէս մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, ալիւրի պուդը արժէր այդտեղ 40—60 կօպ., ցորենը 35 կ. գարին 15—20 կ., իւղի ֆունտը 20 կ., կարագ 15—20 կօպէկ, հարիւր հատ ձու 40—50 կ., պանրի ֆունտը 3—5 կօպ., մի քառ. սաժէն փայտ 20—25 ռուբլ։

Մեզ հաղորդում են ԱԽԱԼՑԽԱՑԻՑ որ նորերումս քաղաքիս հայ քահանաները միաբան բանմութեամբ տեղիս մատենադարանի բացման և հիմնաւորութեան հանդէս կատարեցին։ Մատենադարանի կանոնադրութիւնը պէտք է ներկայացնեն սրբազան առաջնորդի հաստատութեանը։ Մինչև այս օր մատենադարանի մէջ կան 40 հատորի չափ հին և նոր գրքեր, որը ընծայ ստացած են զանազան անձինքներից։

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են որ այդտեղի թեմական դպրոցի նոր նշանակված տեսուչ, պ. Բէգնազարեանը բաւական փորձված և եռանդոտ երիտասարդ է երևում։—Երևանի ծխական դպրոցները շատ անկարգ դրութեան մէջ են և մեր թղթակցի կարծիքով հարկաւոր էր որ թեմական դպրոցի տեսուչը հսկէր և ծխական ուսումնարանների վրա։ Թղթակիցը հրաւիրում է պ. Բէգնազարեանի ուշադրութիւնը Երևանի Ս. Պետրոս և Պօղոս եկեղեցու ծխական դպրոցի մէջ հայոց լեզուի դասաւանութեան վրա։ Այդ ուսումնարանում մայրենի լեզուն շատ անբաւականացուցիչ կերպով է աւանդվում։—Մի երիտասարդ դիտաւորութիւն ունի հիմնել Երևանում մի չքաւոր հայերէն լեզուով։ Ցոյս ունենք որ հիմնվող լրագիրը նպատակ կունենայ քննել և վճռել Երևան քաղաքի, գաւառի և նահանգի ներքին հարցերը և ոչ թէ կը զբաղվի անձնական կռիւներով, կամ պօլէմիկայով կը լցնէ իր էջերը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հեռագրերը անդադար հաղորդում են մեզանց հակասող լուրեր՝ մի անգամ հաղորդում են որ Սերբիան հրաժարվում է պատերազմ սկսել Թիւրքիայի դէմ, միւս անգամ թէ սերբիական պատերազմական կուսակցութիւնը այնքան ոյժ է ստանում հետզհետէ, որ կարելի է կարծել թէ այսօր կամ վաղը Սերբիան յայտնելու է պատերազմ Թիւրքիային։ Կ. Պօլսից գրում են փարիզի լրագիրներին, թէ Թիւրքիայի մայրաքաղաքի բնակիչների մէջ մեծ յուզմունքներ կան, թէև յայտնի չէ ինչ տեսակ յուզմունքներ, և թէ սէրուԹիւնը շատերին կալանաւորում է։ Հասանը, որ երկու մինիստրներին սպանել է, այս օրերս կախվեցաւ սէրուԹեան հրամանով։

ԱՆԳԼԻԱՆ կրկին առաջին դեր է խաղում եւրօպական քաղաքականութեան մէջ,—այդ հիացնում է անգլիական ազգասէրներին։ Դիզրաելի պաշտպան է դուրս եկել 1856 թւի փարիզի դաշնադրութեան և անգլիական պարլամենտի նստերը վերջին ժամանակներս նուիրված են միայն արևելեան հարցին։ Լորդ Դերբի և պ. Դիզրաելի պարլամենտի երկու բաժանմունքների իւրաքանչիւր նստին բարձրանում են ամսիօն որ պաշտպանեն Թիւրքայ պետութեանը։

Այս բոպէիս ԱՄԵՐԻԿԱՅԻ հանրապետութիւնը զբաղված է աշխարհահանդէսով և նոյնպէս պատրաստվում է շուտով իր հարիւրամեայ գոյութեան տարեդարձը տօնելու։ Հանրապետութեան նախագահի ընտրութեան ժամանակը մօտենալով, Ամերիկայի իւրաքանչիւր քաղաքական կուսակցութիւնը իր կանդիդատ է առաջարկում այդ պաշտօնի համար։

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ նշանաւոր անձնաւորութիւնները քաղաքական բարձր շրջանների, այս բոպէիս հանդստանում են իրանց աշխատանքներից։ Ինքն Վիլհելմ կայսրը Էմսի մէջ է, իշխան Բիսմարկը իր ընտանիքով Կիսինգէնի ջրերի վրա է։ Արտաքին գործերի մինիստրի ընկեր, պ. Ֆօն-Բիւլով Մարիէնբադ է գնացել և գօկտոր Ֆալկ, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը արձակուրդ է վեր առել։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ

Քանի տարուց աւելի է որ Թիւրքիայում հրատարակվում են հայոց լրագիրներ և օրագիրներ։ Ի՞նչ արին նրանք այդ քանի տարվայ մէջ.... Ոչ թէ միայն ոչինչ չարին, բայց մենք աներկիւղ կասենք որ մեծ վնաս էլ բերեցին Թիւրքիահնակ հայերի կանոնաւոր մտաւոր զարգացման գործին։ Եւ այդ մենք կապացուցանենք դրական փաստերով։ Տասը տարուց աւելի է որ մենք անդադար կարդում ենք Թիւրքիայի հայոց լրագիրները և այդ ժամանակի ընթացքում մի անգամ պատահած չենք Թիւրքիայի հայոց մամուլի մէջ մի առաջնորդող յօդված, այսինքն մի որ և է ինքնուրոյն գրվածք, որ խմբագրի գլխի ծնունդ լիներ, որ քննէր երկրի կամ քաղաքի ներքին, հասարակական կամ տընտեսական մի որ և է հարց.... Հայոց լրագրութիւնը փոխանակ ներքին հարցերով զբաղվելու, ջանում է իր սահմանափակ, ծիծաղելի դատողութիւններով վճռել ընդհանուր եւրօպական քաղաքական հարցերը։ Քանի տարվայ ընթացքում Թիւրքիայի հայոց կարդացող հասարակութիւնը ընտելացաւ այն համոզմունքին, թէ լրագիրը միայն դրա համար է հրատարակվում, որ օտար երկրների քաղաքական լուրեր տայ, Թիւրքաց պետութեան զանազան հրամաններ տպի, փողոցում պատահած այս կամ այն խայտառակութիւն պատմի, այս կամ այն անձնաւորութեան դէմ կրքերով լի յօդված ուղղի,—աւելի ոչինչ։ Իսկ ոչ ոք չէր պահանջում լրագրից որ նա զբաղվի տնտեսական, հասարակական հարցերի վճռելով, որ քնեի օրական հարցերը, որ արձագանք դառնայ ժողովրդի առօրեայ պահանջների և առաջնորդի հասարակական կարծիքը իր իրական օգուտների, իր գոյութեան համար, ամենահրաժեշտ իրաւունքների պաշտպանութեան գործի մէջ։

Մի կողմից քաղաքական դարգահասութիւններով էին զբաղված մեր լրագիրները քանի տարի շարունակ, միւս կողմից ընտելացրին ընթերցող ժողովուրդը պառաւ կանանց բամբասանքներին։ Ամենաձարտար, ամենատաղանդաւոր, ամենափիլիսոփայ գրողը Թիւրքիայի հայերի մէջ համարվում էր նա, որ ամենից ընդունակ էր մի որ և է անձնաւորութեան դէմ ամենատոր հայհոյեանքներ ուղղելու։ Մենք աներկիւղ ասում ենք որ Թիւրքիայի հայոց լրագրութեան ազդեցութիւնը ոչ թէ միայն կրթողական չէր, այլ ունեցաւ Թիւրքիահնակ հայերի վրա ամենանեարոյականացնող ազդեցութիւն։ Այդ բաւական չէ հայոց թերթերը Թիւրքիայում կոտրեցին հայոց ժողովրդի աչքում լրագրութեան յարգը, նրա նշանակութիւնը։ Հայը համոզվեցաւ որ լրագիրը չէ կարող մի պիտոյք, մի օրական պահանջ դառնալ, իր գոյութեան համար անհրաժեշտ գործիք լինել.... Հայ գրողը, հայ հոսոս հեղինակը, հայ խմբագիրը, որ ինքն անգրագէտ մարդ է, որ ուսում է արել մի որ և է տարրական դպրոցում, այն էլ թերի կերպով, որ շատ շատ երեք չորս ամիս Փարիզի բուլվարներ է չափել, որ չը գիտէ թէ ինչ է նշանակում միջնակարգ դպրոցի, և յետոյ համալսարանի ծանր, տոկուն աշխատանքը,—ուզում է զարմացնել իւր ընթերցողներին իրան հայկական ձևացնելով։ Շատ անգամ յօդվածի մէջ ոչինչ միտք չը կայ, բայց նրա մէջ կը տեսնէք ամենարնտիր, խրթին, անհասկանալի, բառարանից վերցրած բառերի շարվածքը.... Հայ հեղինակը գլխաւոր ուշադրութիւնը դարձնում էր ոչ թէ յօդվածի մտքի, յայտնած գաղափարների ճշդութեան, պարզութեան և ժողովրդին մատչելի լինելու վրա,—այլ ձևի գեղեցկութեան վրա....Յօդվածը միտք չունի, բայց ձևը գեղեցիկ է,—դա բաւական է.... Այդպիսով հայոց լրագրութիւնը քան տարուց աւելի աշխատեց սպանել միտքը ձևի համար, զոհեց միտքը ձևին.... Եւ ընթերցող հասարակութիւնը ընտելացաւ այն համոզմունքին, որ բոլորովին հարկաւոր չէ լրագրական յօդվածի միտքը հասկանալ....

Քանի՞ տարի է որ Կ. Պօլսի հայերը վայելում են Թիւրքայ տէրութենից ստացած սահմանադրութիւնը։ Ի՞նչ արաւ հայոց լրագրութիւնը այդ ժամանակամիջոցում։ Արդեօք յանձն արաւ նա քննադատել, պարզել հասարակական, տնտեսական հարցերը, որոնց իրաւունք ունէր վճռել սահմանադրական ժողովը։ Առաջնորդեց նա հասարակական կարծիքը այդ հարցերի վճռելու մէջ։ Ոչ,—մենք տաս տարի շարունակ կարդալով Կ. Պօլսի հայոց թերթերը, տեսանք միայն երկու հարց՝ կրօնական անվերջանալի վէճերը, և ուսումնարանների վերաբերութեամբ գրաբարի և աշխարհաբարի մինչև այժմ չը վճռված հարցը։ Ե՞րբ խօսեց „Մասիսը“ կամ Թիւրքայ հայերի մի այլ լրագիր որ և է ներքին, կենսական հարցի վրա, երբ խօսեց արվեստների, արհեստների, առուտուրի դրութեան վրա, մշակների փոխատու ընկերութիւնների, Կ. Պօլսում առևտրական կամ քաղաքային բանկի հիմնելու անհրաժեշտութեան վրա.... Երբ խօսեց Թիւրքիայում պարտադիր ուսում մտցնելու հարկաւորութեան վրա, կամ գաւառներում ճանապարհներ շինելու վրա, երբ խօսեց երկրագործ դասի թշուառ դրութեան, և այդ դրութիւնը բարւոքելու հնարների վրա, մայրաքաղաքի առողջապահական հարցերի վրա, ինչպէս ջրանց.քը, մաքուր վանառանոցը, սպանդանոցը և այլն և այլն.... Միակ հարցը որի վրա խօսեց՝ այդ գերեզմանատան խնդիրն էր, այն էլ ոչ թէ առողջապահական կէտից, բայց մօրեռանդ կրօնական հայեացքից....

Վերջապէս ոՐ կենսական հարց յարուցվեցաւ և քննվեցաւ հայոց լրագրութեան մէջ,—ոչ մէկը.... Եւ այն էլ քսան տարի գոյութիւն ունեցող լրագրութեան մէջ....

Եւ այժմ, երբ Թիւրքիան պիտի վերանորոգվի, երբ այդ երկիրը նոր քաղաքական սահմանադրական ասպարէզ պիտի մտնի, արդեօք Կ. Պօլսի հայոց լրագրութիւնը պատրաստում է հասարակական կարծիքը մշակված յօդվածներով նոր պարտաւորութիւնների կատարելուն և իրաւունքների վայելելուն... ոչ, նա շարունակում է իր կրօնական վէճերը, իր բամբասանքները, իր կուսակցական վիճաբանութիւնները այս կամ այն աբեղայի, խրիմեանի, Ներսէսի, կամ Պողոսի մասին, նա շարունակում է լցնել իր էջերը դարդակ քաղաքական յօդվածներով և փողոցային լուրերով թէ այս ինչ թաղում մի մարդ սպանվել է, այն ինչ փողոցում օմնիբուսը մի երեխայի մարմնի վրա է անցել ու նրան սպանել և այլն....

Յարուցի՞ք արդեօք մի անգամ այն հարցը որ սահմանադրութիւնը անհնարին է մի երկրում, որտեղ պարտադիր ուսում մտցրած չէ, որտեղ կրթութիւն չը կայ, որտեղ լրագիրների խմբագիրները, հասարակական կարծիքին ուղղութիւն տուողները իրանք անգրագէտ, տգէտ մարդիկ են.... Մտածեցի՞ք արդեօք և լսած էք երևելի Պրուդօնի նշանաւոր խօսքերը որ նա Ֆրանսիայի վրա ասեց՝ „Ընդհանուր ձայնատուութիւնը խաբեբայութիւն է, քանի որ ժողովուրդը, ամբոխը տգէտ է։“ Այնպէս էլ Թիւրքայ սահմանադրութիւնը խաբեբայութիւն է, քանի որ ամբոխի մէջ կրթութիւն չի լինի, քանի որ երկրի բոլոր հպատակ ազգերի մէջ մտցրած չի լինի պարտադիր ուսում....

Այդ ինչի՞ն է որ եւրօպական լրագրութիւնը, որ միշտ հետևում է բոլոր երկրի լրագրութեանը, որ անդադար քաղվածներ է անում չեխական, ունգարական, պատօնական, լեհական, լեթական, յոյն, Թուրք և այլ լրագիրներից, որ Կ. Պօլսի մէջ հրատարակվող եւրօպական թերթերից յօդվածներ է արտատպում,—ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում Թիւրքիայի հայոց լրագրութեան վրա... Ինչի՞ցն է որ քսան տարուց աւելի որ այդ լրագիրները հրատարակվում են, երբէք մի ֆրանսական, գերմանական, անգլիական, ռուս լրագրի մէջ պատահած չենք ոչ մի քաղվածք, ոչ մի լուր „Մասիսից“, կամ Կ. Պօլսի հայերէն լեզուով հրատարակվող մի այլ թերթից....

Խմբագրութեան պաշտօնը չէ կարելի յանձն առնել այդ գործի մէջ մասնագէտ չը լինելով, ինչպէս և ամեն մասնագիտութեան մէջ. անպատրաստ, տգէտ, անգրագէտ, հազիւ տարրական ուսումնարանի մէջ ուսում աւարտած լինելով չէ կարելի ձեռք տալ մի գործին, որին յանձնված է հասարակական կարծիքի առաջնորդելը։

Լրագիր հրատարակելը մի խաղալիք չէ.... Հարկաւոր է այդ բանի համար, ինչպէս և ուրիշ մասնագիտութիւնների համար, պատրաստվել գոնէ կեանքի առաջին կէսը, հարկաւոր է աւելի աշխատանք, աւելի ուսում, աւելի տոկունութիւն, բարձրագոյն ուսում—հարկաւոր է վերջապէս աւելի համեստութիւն ունենալ և այնքան անամօթ յանդգնութիւն չունենալ, ինչքան ունէին և ունեն մինչև այժմ մեր բոլոր խմբագիրները և գրողները։

Գ. Ա.

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Մայիսի 29-ին

Վերջին ժամանակներս ամբողջ Եւրօպայի լրագիրները արդէն զբաղուած են սատիկ կերպով արևելեան դժուար վճռելի խնդրով, որ քանի տարի է մի վերջնական վճռի չը հասաւ։ Տաճկաստանի կառավարութիւնը, որ մեծ յոյս դնելով Փարիզի դաշնադրութեան վրա, իւր երկիրը ապահոված կը համարէր, մտածելով որ երբէք Եւրօպայի տէրութիւններից ոչ մինը չէր համարձակվելու դիպչել իւրեան՝ քրիստոնեայ ազգերի վիճակը բարւոքելու դիտմամբ, կամ բոլոր տէրութիւնները ի միասին մի համաձայնութեամբ չեն կարող ապտակ անդամ դարկել, այլ ընդհանուրն երեսանց մէկ մէկի «համբէք» անելով, իսկ դաղտի ամենը դէպի իւր կողմը կը քաշէ և այդպէս չեն կարող մի նպատակի ծառայել,—ժպտալով կասէր. «Թող կատուները կռուեն, իսկ մուկը ամուր կը կենայ իւր ծակումը.» և այսպէս կողմնակի մտածելով, ապահոված համարեց իւր երկիրը և քնեց իւր քնի մէջ։ Չը կարողացաւ անդամ կասկածել, որ մի չնչին պատճառի էր մնում այդ դաշնադրութիւնը խախտելու որ և եղաւ վերջին պատերազմից յետոյ։

Ռուսիան մի կարճ միջոցում երկու յաջողութիւն ձեռք բերեց,—Սև ծովի վրա համարձակ ոտք կոխեց, նորանից յետոյ Խիվան ձեռքը դցեց։ Ահա մեծ յաջողութիւն, որի վրա Անգլիան պատկառանքով նայեց և լռեց, հեռուից միայն երկիւղներ տալով։ Տաճկաստանը այնուհետև նոր քնասթափ եղաւ և նկատեց, որ հզօրէն հզօրը կայ եղել,—և կարեւորութիւն զգաց Ռուսիայի հետ աւելի բարեկամանալու, քան Անգլիայի հետ, որպէս և արաւ ուրիշ ձևի փոխելով իւր բարեկամութիւնը. բայց այդ արդէն ուշ էր, Տաճկաստանը բժշկելու վէրքեր շատ ունէր, իսկ իրան դեռ յայտնի չէր.—զանձարանը աղքատացել էր, ամիսը մի անդամ մի եպարքոս փոխելը արժան չէ նստել իւրեան, բայց այս բաւական չէր։ Բոսնիան և Հերցեգովինան նեղացած են, աղատութիւն են ուզում, չեն ուզում Տաճկաստանի պէս տէրութեան հպատակ լինել և շատ հեշտ է նպատակներին հասնելու, որովհետև միանգամայն հասկացել են Թիւրքիայի վիճակը։ Օր աւուր հզօրացան ապստամբութիւնները և նրանց դէմ դնելը աւելի դժուարացաւ. տէրութեան զանձարանում ոչինչ չը մնաց, կրեդիտ այլ ևս չունի, բօրսայի վրա 100 ղրուշանոց կոնսոլիդը 11-ի իջաւ, ժողովրդի աղքատութիւնը վերին աստիճանի հասաւ, միլիոնատէր հարուստը հարիւրի տէր դարձաւ, առևտուրը չքացաւ, բոլոր ժողովուրդը յուսահատութեան մէջ ընկաւ։ Նախկին եպարքոսը և սուլթանը որ զանձարանը իւրեանց քսակ էին դնել, հոգ չէին տանում ամենևին... բայց տես ինչ հեռանք ունեցաւ։

Ցուսահատ մարդից ամեն բան կարելի է սպասել, Թիւրքիան էլ ընկել էր յուսահատութեան մէջ. Մոլեռանդ տաճիկը որ դաղտիարանդամ չունէր սահմանադրական կառավարութեան վերա՝ այսօր դլուխը բաձրացած պահանջում է Սուլթանից որ կառավարութիւնը սահմանադրական լինի։ Ժողովրդի մէջ դղրդոց էր ընկել, քրիստոնեաները

ահ ու դողի մէջ էին ընկել, նամանաւանդ հայերը։ կարդացող մոլեռանդ սօֆթաները կրակի աչքով էին նայում քրիստոնեայ աղգերի վրա, Կ. Պոլսի մէջ ամեն տեղ լսւում էր թէ այսօր կամ վաղը մեծ արիւնհեղութիւն կը լինի տաճիկների և քրիստոնէից մէջ, նորանք ասում էին, որ այս խռովութիւնները բոլորը դեսպանների (քրիստոնէից) պատճառաւ են, որ ապստամբութիւնը օր աւուր կը հզօրանայ և այլն։ Մի եւրոպական հագուստով մարդը ահ ու դողով կանցնէր Ստամբուլ թուրքերի թաղով։ Կատաղի սօֆթաներից իւրաքանչիւրը մի բեվօլվէր ունէր գրպանում։ Ամբողջ Կ. Պոլսում, ուր ամեն տեսակ առուտուրը կարուած էր, այն օրերին զինավաճառների խանութներն սօֆթաների բաղմութեամբ լի էին, ամենը մի բեվօլվէր կամ սուր կառնէր քրիստոնէից արիւնը խմելու նպատակաւ։ Տեղացի հայ արուեստաւորների և վաճառականների խանութները փակվում էին։ Մի անդամ այս խառնակ օրերում մի մարդ իւր գործի համար կը վազէր փողոցի մէջով, ամբոխը այս տեսնելով՝ սկսեց ամենը մի կողմը փախչել, խանութները մի րոպէում խկոյն դոցուեցան, մի հայ օտարական ծերունի երկիւղից մեռաւ, երկու տարեկան մի երեխայ ոչ մի բան չեղաւ։ Բայց ինչ տեսան որ նապաստակի պէս քամիցն են վախեցել... ոչինչ չը կար. եթէ այն բոպէին մի հրացան էր արձակուել, բոլորը սրտաճաք կը լինէին։

Պատմեմ այժմ, այն, որ Տաճկաստանը մի հըրաշք գործեց։ Ասացի որ ժողովուրդը սահմանադրական կառավարութիւն էր ուզում Սուլթանից, ժողովուրդ ասելով պէտք է հասկանանք այն կարդացող հոգևորականների դասը (սօֆթաները), որոնց մոլեռանդութիւնը հայրենասիրութեան հետ ձուլուած կատաղել էին և չը գիտէին ինչ անեն, ժողովեցան բարձր. Դրան առաջը սահմանադրութիւն պահանջելով, բարձր. Դուռը խոստացաւ նորանց պահանջներին դարման անել, որ և եղաւ։—

Մի օրուայ մէջ մեծ եպարքոսը և շեյխ-իւլ-իսլամը (հոգևորականաց գլխաւորը) փոխուեցան, ժողովուրդը դորա վերայ փոքր ինչ հանգստացաւ, բայց այս բաւական չէր։

Մի առաւօտ երբ դեռ բոլոր ժողովուրդը քնած էր, յանկարծ թնդանօթների որոտումն ընկաւ Կ. Պոլիս, ժողովուրդը, որ ոչինչ բանի տեղեակ չէր, ապշած էր մնացել, մինչև որ իմացաւ գործի էութիւնը, թէ Ապտիւլ-Ազիզ Սուլթանը գահընկեց եղաւ և դորա տեղը նստեց իւր եղբօր-որդի Սուլթան Մեջիդի որդին, Մուրադ խանը, կոչուելով այժմ Սուլթան Մուրադ հինգերորդ, որի իշխանութիւնը պէտք է սահմանադրական լինի։

Ահա մի հրաշք, մի մեծ քայլ որով Թիւրքիայի պէս ժողովուրդը զարմացրեց Եւրոպային, և յիրաւի բոլորովին անյուսալի էր այդ բանը և դժվարի է որ եղաւ առանց մի կաթիլ արիւն թափելու. ոչ մի լրագիր չը կարողացաւ երազել այս բանը։ Թէ ինչպէս է եղել՝ կամ ինչ հնարով՝ միւս անգամ կը գրեմ։ Բայց զարմանալի չէ մի կողմով այն պատճառով, որ բոլոր ժողովուրդը զզուած էր Ապտիւլ-Ազիզ-սուլթանից, որ ոչ մի մարդ չունեցաւ իւր կողմը։ Երեք օր լուսաւորութիւն եղաւ Սուլթան Մուրադի գահը նստելու համար, ժողովրդի ուրախութիւնը անկարագրելի էր, որովհետև ամենը սիրումեն դորան։ Ապտիւլ-Ազիզ նախկին Սուլթանը չը կարողանալով տանել իւր գահընկեցութեան անպատուութիւնը, որ Թիւրքիայի մէջ դեռ ևս չէ եղած՝ ինքն իրան սպանեց և մեծ փառքով թաղուեցաւ։

Առ այժմ այսքան, միւս անդամ նորա մասին թէ ինչ եղաւ նորա մահից յետոյ, և ինչ հնարքով գահընկեց եղաւ։ Սահմանադրութիւնը երէկ հաստատվեցաւ։ Ա. Ծ.

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Գաղը-զիւղ, յունիսի 5

Գաղը-զիւղի ծովի ափը ածուխ բերող նաւերի համար երկու նաւահանգիստ կայ՝ մին փոքր, միւսը մեծ։ Փոքրի մօտ 40 հայ բեռնակիր մշակներ են գտնվում նաւերից ածուխ հանելու համար, իսկ մեծի մօտ 120 տաճիկ բեռնակիրներ կան։ Երեկ, յունիսի 4-ին մի նաւ ածուխով լի հայերի նաւամատոյցին հանելով, հայ մշակները սկսում են դարդակել նրան։ Թուրք մշակները տեսնելով այդ և իրանք առանց աշխատանքի մնալով, յարձակվում են հայ բեռնակիրների նաւամատոյցը և կամենում են խլել նրանցից բեռները։ Սկսվում է հայհոյանք, կռիւ և գործը մեծանալով ծեծի է փոխվում։ Տաճիկ մշակները աւելի բազմաթիւ լինելով բացի սորանից մօտակայ թուրք ժողովրդի մի քանի անձինքն էլ նրանց հետ միանալով, հայերը սաստիկ ծեծվում և վիրաւորվում են։ Ոստիկանութիւնը հասնում է և հայերը բաւական ջարդված, ոստիկանութեան օգնութեան են դիմում։ Բայց ոստիկանութեան ներկայացուցիչները ընդհակառակն թուրք մշակներին հանգիստ թողնելով, հայերին կալանաւորում են, որպէս խռովութիւն զցողներին և դարձեալ հայհոյելով և ծեծելով նրանց, տանում են դէպի ոստիկանութեան վարչութիւնը։ Ճանապարհին պատահած մի թուրք հաղարապետ խրախուսում է ոստիկաններին, կանչելով՝ անհաւատներին պէտք է անողորմ կերպով սպանել... Վերջապէս ծեծված, ջարդված, հայհոյված խեղճ հայ մշակներին, որպէս խռովարարներին բանտարկում են...

Մի անցաւոր հայ երիտասարդ, որ տեսնելով թէ խեղճ մշակներին բանդ են տանում, սկսում է խրատել ոստիկաններին անմեղ բեռնակիրներին ազատելու,—թուրք ոստիկան զինուորականները նրան էլ բռնում են և այնքան ծեծում են, մինչև քթից ու բերանից արիւն է գալիս։

Կարծեմ որ այդ տեսակ ճարտարախոս իրողութիւններ պատմելուց յետոյ, աւելորդ է երկար ու բարակ խօսել և ապացուցանել թէ մի երկիր որ տան և ինքներորդ տարում այդ տեսակ բարբարոս դրութեան մէջ է, որ յիշեցնում է մեղ Զինգիզ-Խանի և Թիմուր-Լէնգի ժամանակները, անընդունակ է իրագործել նոր, ազատութեան, արդարութեան, և հաւասարութեան վրա հիմնված վերանորոգութիւնները։ Այդ տեսակ բարբարոսական, վայրենի երևոյթներին ականատես լինելուց յետոյ, մարդը ակամայ հրաժարվում է հաւատ ընծայել այդ մօնդօլական երկրի մէջ եւրոպական սահմանադրութեան իրագործմանը...

Ամեն մտածող մարդ դառն ժպիտով խոստովանվում է որ սահմանադրութեան յայտնելը անամօթ խաբեբայութեան մի հնար է մօնդօլական տէրութեան կողմից, եւրոպական երկիրների լուսաւորված հասարակական կարծիքը մոլորեցնելու և գրաւելու համար...

***

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Միւլհաուզէն, յունիսի 10

Սորանից 78 տարի առաջ Մուլհաուզէն քաղաքը ունէր 6000 բնակիչ։ Գործարանների հետզհետէ աւելանալով, սկսել են հաւաքուել գործաւորներ Ֆրանսիայից, Գերմանիայից և Շվեցարիայից, այնպէս որ այժմ բնակիչների թիւը տասն անդամ աւելի է։ Հասկանալի է, որ աղգաբնակութեան այսպէս արագ աճելով, սաստիկ ղդալի պիտի լինէր բնակարանների սակաւութիւնը։ Արուեստագործական ընկերութիւնը (Societé industrielle) որ այս տարի իւր հիմնարկութեան յիսուներորդ տարեդարձը տօնեց, վաղուց ուշադրութիւն է դարձրել գործաւորների այս դրութեան վերա։ Այդ ընկերութիւնը յիսուն տարուայ մէջ բոլոր ճիգը թափել է հասարակ ժողովրդի դրութիւնը լաւացնելու՝ աւելացրել է ուսումնարաններ, կարճացրել է կանանց և երեխանց աշխատանքի ժամանակը, վերցրել է լոթերիները, փողով թղթախաղը, աշխատել է մտցնել պարտադիր ուսում, և այլն. 1851 թ. Ժան Ցուբէր ֆաբրիկանտը, ընկերութեան մի նստի մէջ անդամների ուշադրութիւնը դարձրել է բնակարանների խնդրի վրա, ցոյց տալով անգլիացի Հէնրի Բոբերտ դրուածը այդ մասին, և Ալբերտ իշխանի Անգլիայում հիմնած գործաւորաց թաղերի պլանները։ Ընկերութիւնը համակրելով Ժան-Ցուբէրի յայտնած մտքին, խկոյն վճռել է հիմնել մի ընկերութիւն ակցիաներով, որի նպատակը լինի գնել քաղաքի մօտ գտնուած ընդարձակ դեղինները և շինել տալ բնակարաններ գործաւորաց համար։ Հիմնական դրամագլուխ որոշվել է 300,000 ֆրանկ, բաժանուելով 60 ակցիաների, իւրաքանչիւրը 5000 ֆր.։ Ակցիօներների թիւը քիչ ժամանակուայ մէջ հասել է 12-ից մինչև 20, իսկ ակցիաներինը 71-ի, որով հիմնական դրամագլուխ աճել է 355,000 ֆր.։ Ֆրանսիական կառավարութիւնը աւելացրել է դորա վերա 300,000 ֆր.։ Ընկերութիւնը շինութեան ժամանակ 98 տուն դրաւ է դրել Կալուածական բանկի մէջ (Crédit foncier) վեր առնելով 355,000 ֆր. 5 պրոցէնտով, և այսպէսով նորա շարժիչ դրամական ոյժը (force motrice) հասել է մօտ 1 միլիոն ֆրանկի։ Թէև կառավարութեան տուած դումարը փողոցների, տրօտուարների, ջրանցքների, բաղանիսների շինութեան և դաշտի լուսաւորութեան համար էր, բայց այսու ամենայնիւ պարզ է, որ նա տների գինը բաւական ցածացրեց, աղատելով նրանց վերոյիշեալ հասարակաց շինութիւնների համար տալու անհրաժեշտ քաղաքային հարկերից։ Ընկերութիւնը իրա նպատակին հասնելու համար, միջոցներ է տուել գործաւորներին, որպէս զի սոքա կարողանային շինուած տները գնել իւրեանց համար։ Առաջին պայմանը այն է, որ իւրաքանչիւր տանտէր վճարել ցանկացող գործաւորը պէտք է վճարէ 250—300 ֆր. նայելով տան արժողութեան. այս դումարը ապուց յետոյ նա ոչ միայն ազատվում է կօնտրակտի և այլ այսպիսի ծախսերից, այլ և ստանում է տանտիրոջ բոլոր իրաւունքները *)։ Մնացած պարտքից նա ազատվում է փոքր առ փոքր, վճարելով ամիսը 18—25 ֆրանկ, նայելով, թէ որչափ արժէ իրա առած տունը։ Այս ձեռնարկութիւնը ունեցել է հիանալի հետևանք՝ գործաւորի տուած ամսական փոքր երբէք բարձր չէ եղել այն ամսական վարձից, որը նա տալիս է եղել իր առաջուայ թաղի մէջ կեցած հին, փոքր ագեղ և անառողջ ընակարանի համար։ Նորա տուած ամսականը փոքր ինչ աւելի է այն դումարից, որը նա պէտք է տար, եթէ միայն վարձող լիներ։ Ասենք թէ նա վեր է առել մի տուն, որ արժէ 3000 ֆր. վարձողը տալիս է տարին 240 ֆր., իսկ գնողը բացի միանգամուայ 300 ֆրանկից, տալիս է տարին 300 ֆր. և այս կերպով նա 13 տարի և մի քանի ամսից յետոյ կատարեալ տէր է դառնում իրա տան վրա առաջինից միայն 1300 ֆր. աւելի տալով **)։ Դժուար է հաւատալ, թէ նա, եթէ գնող չը լիներ, պիտի կարողանար խնայել այդ 1300 ֆրանկը 13 տարի ժամանակուայ մէջ։ Բացի սորանից հարկ չէ մոռանալ, որ նա ամբողջ 13 տարի վայելել է տանտիրոջ բոլոր իրաւունքները, և այդ ժամանակը լրանալուց յետոյ, տունը իրա գեղինով, բակով և այգիով դարձել է նորա կատարեալ սեպհականութիւն,—մի սեպհականութիւն որ այժմ տասն անդամ աւելի արժէ, քան թէ առաջ, երբ նա տունը գնել էր...

Մի այսպիսի ձեռնարկութիւն իրա նպատակին հասնելու համար, հարկաւ պէտք է դնէր մի քանի պայմաններ։ Սոցանից առաջինը այն է, որ տասը տարի չանցած տուն առնողը իրաւունք չունի նրան վաճառելու առանց ընկերութեան խորհրդարանի թոյլտուութեան։ Այս խելացի միջոցը այն հետևանքն է ունեցել, որ այժմ գրեթէ բոլոր տները գործաւորների սեպհականութիւնք են. ապա թէ ոչ շատ դժուար կը լինէր ազատել խեղճ գործաւորներին մի քանի հրեաների ու սոցա նման չափազանց ճարտար շահախնդիր անձինքների պէս որոգայթներից։ Երկրորդը այն է, որ տանտէրը պէտք է աշխատէ լաւ մաքրութիւն պահպանելու բոլոր տանը, ու այգիի մէջ, և նրանց մէջ մի բան նորոգելիս ընդդէմ չը գործէ ընկերութեան այդ մասին դրած կանոններին։ Երրորդ՝ իրաւունք չը կայ տունը կամ սորա սենեակների մի մասը փոքացուած բարոյականութեան տէր մարդոց վարձով տալու։ Վերջին ժամանակները մի պայման էլ աւելացրած է, այն է, որ իւրաքանչիւր տանտէր լինել ցանկացողը պէտք է անպատճառ իրա երեխանց կանոնաւոր կերպով ուսումնարան ուղարկէ։

Տալիս եմ ճիշդ թուանշաններ թաղի շինութեան մասին։

Յունիսի 30-ին 1854 թ. շինութեան առաջին տարուայ վերջին օրը։

1) Շինուած տների թիւն էր 100, արժողութեամբ. . . .	256,000 ֆր.
2) Նրանցից ծախուեցան նոյն տարուայ մէջ 49, արժողութեամբ. .	118,000 »
3) Այդ դումարից վճարուեցաւ կանխիկ.	26,000 »
4) Մնաց	92,000 »

Յունիսի 30-ին 1875 թ.

1) Շինուած տների թիւն էր՝ 892, արժողութեամբ . . .	2,610,000 ֆր.
2) Վաճառվեցան 886, արժողութեամբ	2,594,000 »
3) Կանխիկ վճարուած էր. .	2,920,000 »
4) Մնացել էր	854,000 »

Ասել է, թէ 22 տարուայ մէջ չքաւոր մշակներ և արհեստաւորներ կարողացել են խնայել 2,920,000 ֆր. որ այսօր կարող ենք համարձակ ասել 3 միլլիոն ֆրանկ, իսկ քաղաքի մէջ այժմ աւելացել է 1000 դեղեցիկ տուն։ Վաճառուած տներից ստացուած վաստակը գործ է ածուել թաղային վարչութեան և զանազան բարեգործական նպատակների համար *)։ Այդ վաստակը յունիսի 30-ին հասել է 310,000 ֆր. և դեռ մնացել են չը ծախուած 6 տուն, արժողութեամբ 15,700 ֆր.։ Ընկերութիւնը այդ վաստակի վրայից հիմնել է թաղի մէջ երկրորդ տարրական ուսումնարան, ծախսելով նորա վերա 31,000 ֆր., յետոյ տուել է առաջինի բարեկարգութեան համար 4000 ֆր., այնուհետև քաղաքային վարչութեանը տուել է 4000 ֆր. օժանդակութիւն գործաւորաց երկու թաղերի միջից անցնող գետի վրա մի մեծ կամուրջ շինելու համար, տալիս է թաղային հիւանդանոցի բժշկին իւրաքանչիւր տարի 300 ֆր. օժանդակութիւն, տալիս է իւրաքանչիւր տարի քաղաքային վարչութեանը 3000 ֆր. նպաստ փողոցների շինութեան և նորոգութեան համար **)։

Գործաւորաց թաղը վերին աստիճանի ախորժելի տպաւորութիւն է անում մարդի վրա։ Նա չունէ մեծ քաղաքի ճանճրալի, միակերպ տեսարանները, այսինքն բարձր տների անընդհատ շարքեր, որոնք բերդապարիսպների նման փողոցի երկու կողմը կեցած, փակում են երկինքը, արդելում օդին և արևի ճառագայթներին,—նորա մէջ չէ լսվում կառքերի սարսափելի դղրդիւնը որ մարդի ականջները խլացնում ու գլուխը ցաւացնում են,—ընդհակառակն նա նման է մի մեծ ամարանոցի, ամեն տեղ տեսնվում են կանանչ ծառուղիներ, բուլվարներ, տների առաջ այգիներ.—և բոլոր այս բաների հետ թաղը զուրկ չէ նաև մի մեծ քաղաքի յարմարութիւններից, նա, կարելի է ասել, մի մեծ, սիրուն գիւղ է, միացած մեծ քաղաքի հետ...

Աւելորդ է ասել, որ այս թաղերի շինութեամբ աշխատող դասի ոչ միայն առողջութիւնը այլ և բարոյականութիւնն էլ շատ լաւացաւ։ Գործաւորը փոխանակ առաջուայ պէս գինետուներում իրա փողը ծախսելու, այժմ, երեկոները, իրա ընտանիքի մօտ է։ Գործարանից դուրս գալով նա շտապով գնում է իրա սեպհական տունը և իրա այգիի մէջ իրա ընտանիքի հետ միասին անում է իրա ընթրիքը։ Նորա ընտանիքը ազատ ժամերին զբաղուած է բանջարանոցի, այգիի կամ ծաղկանոցի մէջ. շատերը իրանց հարկաւոր բանջարեղէնները ձեռք են բերում իրանց սեպհական բանջարանոցից... նոքա մինչև անդամ վաճառում են աւելացածը, նոյնպէս նաև բուրաստանի ծաղիկները։ Երեխայք, ուսումնարանից տուն վերադառնալով, հարկաւորութիւն չունեն փողոցներում վազվզելու,—նոքա իրենց այգիի մէջ խաղ են անում կամ օգնում են մեծերին մշակելու։ Մինչև անդամ թաղի բուլվարներում հաճիւ երբէք կարելի է զբօսնող անձինք տեսնել՝ ամեն ոք իրա ընտանիքի մօտ է։ Երբ 1864 թ. Ֆրանսիայի ազգային լուսաւորութեան մինիստրը, Դիւրիւի, Միլհաուզէն եկած ժամանակ այցելութիւն արեց գործաւորաց թաղին, նա խնդրեց մի տանտիկնոջ որ սա թոյլ տայ նորան իրա տունը նայելու... նա շատ հաւանեց տանտիկնոջ մաքրասիրութիւնը և հարցրեց թէ նրա ամուսինը երեկոները ուր տեղ է ժամանակ անցկացնում։ «Տանը, քանի որ մենք այս տունը գնեցինք», պատասխանել է կինը։

Միւլհաուզէնի ֆաբրիկանտների իւրեանց գործաւորների մասին ունեցած հոգն ու աշխատանքը միայն թաղերի շինութեամբը չեն վերջացած։ Կան նաև հարիւրաւոր բարեգործական ընկերութիւններ, որոնցից մի քանիսը զեղեցիկ սեռը հիմնել է, և որոնց մասին ես մի ուրիշ անդամ կը խօսեմ։ Այստեղ հարկաւոր եմ համարում յիշել Ժան-Դոլֆուս մեծ ֆաբրիկանտի գործերից մինը։ Այս հարուստի տեղ հարկաւոր եմ համարում յիշել Ժան-Դոլֆուս մեծ ֆաբրիկանտի գործերից մինը։ Այս հարուստի մանելու և հիւսելու գործարանում վաթսուն թուականների սկզբին աշխատում էին 1200 կանայք. Ժան-Դոլֆուս կարգադրել է, որ յդի, ծնանելու մօտ կանայքը վեց շաբաթ ազատութիւն ունենան, մի և նոյն ժամանակ իրանց օրական վարձը լիովին ստանալով։ Այս կարգադրութենից յետոյ փոքր երեխանց մահուան թիւը հետեւեալ կերպով պակասել է՝ առաջ 100-ից 75-ը մեռնում էին մի տարեկանի չը հասած, իսկ յետոյ 62—64։ Յետոյ 1866 թուականից սկսած, մի և նոյն կանոնը մըցրած է նաև ուրիշ մեծ գործարանների մէջ։

---

*) Եթէ մի աշխատասէր ու բարի վարք ունեցող գործաւոր կարող չէ մի որ և իցէ պատճառաւ վճարել այդ դումարը, դորա համար հիմնուել են առանձին բարեգործական ընկերութիւններ, որք տալիս են նրան այդ դումարը։ Ընկերութիւնները յանձնած են այդ նուիրատուութիւնը մի մանաժողովի, որ բաղկացած է 1 նախագահից, 5 անդամներից և տեղական գործարանների 5 մշակներից։

**) Վարձողից վեր են առնում 8%, իսկ գնողի բոլոր ժամանակամիջոցներում տուած փողը, որպէս նաև տան շինութեան վրա գործածուած դրամագլուխը հաշուում են 5%, տոկոս տոկոսի վրա։

*) Ընկերութեան կատարած բոլոր բարեգործութիւնները մի առ մի յիշատակելը շատ տեղ կը բռնէր «Մշակի» մէջ։ Ես յիշում եմ միայն մի քանի մրցութիւններ... Ընկերութիւնը իւրաքանչիւր տարի տալիս է դրամական նուէրներ այն գործաւորներին, որոնք ամենից աւել աշխատասէր են, նոյնպէս և այն ընտանիքներին, որոնք գերազանցում են միւսներին իւրեանց մաքրասիրութեամբ և կանոնասիրութեամբ։

**) Այդ փողոցների ընդհանուր երկարութիւնը հասնում էր 1865 թ. 1 դերմ. մղոնի, որ ասել է 7 վերստ։

Այս տեղեկութիւնների մեծ մասը ես քաղեցի մի գրքից որ անցեալ շաբաթ լոյս տեսաւ *)։ Նորա հեղինակն է տեղւոյս զինուորական բաժնի քահանան. սա մի սարսափելի դժուար աշխատութիւն է կատարել՝ նա վեր է առել Արուեստագործական Ընկերութեան յիսուն տարուայ պարբ. հրատարակութիւնքը (Bulletin de la société industrielle de Mulhouse) և առհասարակ Միւլհաուզէնի մասին բոլոր գրուածքները, և այս կերպով կարողացել է տալ հարկաւոր ճիշդ վիճակագրական տեղեկութիւններ, թէ գործաւորաց թաղի և թէ այլ բարեգործական հիմնարկութիւնների մասին. նա ներկայացրել է մինչև անդամ բոլոր սոցիալական գաղափարները,—մի աշխատութիւն Միւլհաուզէնի մասին, որ դեռ ոչ մի ֆրանսիացի հեղինակ չէր կատարած։ Պատուելի հեղինակը վերջացնում է իրա գրուածքը հետևեալ խօսքերով՝

«Այսպէս ուրեմն, չինելով այսչափ առողջ, յարմար, ընդարձակ, այո, կարելի է ասել, չքեղ տներ գործաւորների համար, ոչ միայն սոցա նիւթական դրութիւնը ապահովեցաւ, այլ և բարոյական վիճակն էլ անհամեմատ բարձրացաւ։ Փոխանակ խեղճ աշխատող դասի, որը 25 տարի առաջ սպառնում էր քաղաքին իր աղքատութեան օր ըստ օրէ աճելովը,—այժմ կարելի է տեսնել հաղարաւոր հաստատ բնակութեան տէր, իրենց վիճակից գոհ եղող գործաւորներ, որոնց առաջ իւրաքանչիւր մարդ յարգանք է զգում։ Սորանով մեկնվում է այն հանգամանքը որ 1870 թուականի սոցիալական շարժումը ոչինչ արձագանք չը գտաւ մի այսպիսի աշխարհահռչակ արուեստագործական քաղաքում, և մինչև այժմ էլ գործաւորաց ամբողջ թաղին բաւական է պոլիցիայի փոքրիկ մասը մի քանի ծառայողներով։ Ուստի վերոյիշեալ մեծ ձեռնարկութիւնը ոչ միայն գործաւորներին օգուտ բերեց, այլ և բոլոր քաղաքացիներին. նա ցոյց տուեց մի և նոյն ժամանակ բոլոր մարդկութեան, թէ սոցիալական խնդիրը կարող է գործնականապէս լուծուել միայն այս ճանապարհով, այսինքն կառավարութեան, հարուստների, հոգևորականների և մշակների ընդհանուր աշխատութեամբ։ Հարուստ գործողների աշխատութիւնը անվարձ չը մնաց՝ Միւլհաուզէնը այժմ աշխարհիս առաջին կարգի արուեստագործական քաղաքներից մինն է, շնորհիւ մշակների հաւատարմութեան և աշխատասիրութեան, ահա այս լաւ ապացոյց կարող է լինել այն ճշմարտութեան, թէ հարուստների ճշմարիտ երջանկութիւնը կախուած է միայն աշխատող դասի օգուտներից։»

Մ. Պապ.

*) Das Arbeiter-Quartier in Mülhausen im Elsass, von Mart. Schall, Divisionspfarrer der K. 31 Division. 1876, Fr. Kortkampf, Berlin, Buchhandlung für Staatswissenschaften und Geschichte. Verlag der Reichs-gesetze.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակ» լրագիրը ուրախութեամբ կընդունէ նուիրատուութիւններ թէ ՁԱՓԱԹԱԼԻ հրդեհից, թէ ԵՐԵՒԱՆԻ հեղեղից վնասուածների համար։

* * *

«Արշալոյս Արարատեան» լրագիրը հաղորդում է որ Թիւրքաց կառավարութիւնը կրկին թոյլատրեցին է հնորհել «Մամուլ Արևելեան» ամսագրին հրատարակվելու։

* * *

Տիկին Ժորժ-Սանդի յուղարկաւորութեան հանդէսը կատարվեցաւ Նօհան գիւղում, որտեղ այդ երևելի կինը ծնված է։ Նրա դագաղի մօտ գնում էին՝ Էրնէստ Բրնան, Ալէքսանդր Դիւմա, իշխան Նապոլէօն և շատ ուրիշ թէ գրականութեան, թէ հասարակական այլ և այլ շրջաններում յայտնի անձնաւորութիւններ։ Վիկտոր Հիւգո մի նամակ ուղարկեց, որ կարդաց Պոլ Մեօրիս։ Երևելի բանաստեղծը իր նամակի մէջ այն միտքն էր յայտնում, թէ շատ անդամ մի նշանաւոր անձնաւորութեան դէմ ուղղած յարձակումները, ամենաստոր հայհոյանքները, այն անձի մահից յետոյ նրա փառքի մեծանալուն են նպաստում։ Հալածանք, յարձակումներ, հայհոյանք՝ ժամանակի ընթացքում փառքի աղաղակներ են երևում։ Եւ ժամանակով մի անձնաւորութեան անուան փառքը մեծանում է այն անձնաւորութեան դէմ եղած յարձակումների սաստկութեան և հայհոյանքների չափի համեմատ։

* * *

Գերմանիայի թագաժառանգի երկու աւագ որդիներ ուսանում են Կասել քաղաքի գիմնազիայում և նրանց հայրը խնդրել է գիմնազիայի վարչութենից որ իր որդիների հետ վարչութիւնը նոյնքան խիստ վարվի թէ ուսման, թէ կարգապահութեան վերաբերութեամբ, ինչպէս և դպրոցի այլ երեխաների հետ։ Երկու եղբայրներից մեծը, որ ժամանակով Գերմանիայի թագաժառանգ կը լինի, այնքան բարեկամացաւ գիմնազիայում մի հրէայ աղքատ ընկերի հետ, որ այդ երկու երեխաները միմեանցից անբաժան են։ Ջատկի տօներին երիտասարդ Ֆրիդրիխ-Վիլհէլմը հրաւիրեց իր ընկերին Բերլին և հրէայ գիմնազիստը ամբողջ շաբաթը իր ընկերի հետ կայսերական պալատում բնակվեց։ Բայց որովհետև նրա դաւանութիւնը չէր ներում նրան Ջատկի տօներին քրիստոնեաների հետ միասին կերակուրներ ուտելու, այդ պատճառով թագաժառանգ իշխանը հրամայած էր որ իր որդու բարեկամ հրէայի համար կերակուրները բերվեն մի հրէական պանդոկից։

* * *

Այս օրերս հասաւ Թիֆլիս, և յունիսի 14-ին իր առաջին կօնցէրտը տուեց մեր թատրոնում, օպերայի դերասանուհի Ա. Բիչուրինա, որ արդէն ծանօթ է մեր ընթերցողներին։ Օրիորդը այժմ Սանկտ-Պետերբուրգի Մարիամեան թատրոնի ռուսաց օպերայի երգիչ է։ Նորա մասին դարձեալ առիթ կունենանք խօսելու։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՒ ԾՆՆԴԱՆՈՑ, Վէրայի վերա։ Ծննդական կանանց ընդունելութիւնը օրվայ և զիշերվայ ամենայն ժամանակ։ Ծննդականների համար հիւանդանոցում, բացի հասարակաց դահլիճներից, որտեղ ծննդականները ապրուստի և բժշկութեան համար վճարում են 50 կոպէկ օրը, իսկ չքաւորները ձրիապէս են պահվում և բժշկվում,—կան նաև առանձին գաղտնի սենեակներ, 30 մինչև 50 րուբլ ամսական վճարով։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, խորհրդի և դեղի համար 30 կոպէկ վճարով։ Աղքատները ձրիապէս։

Ամեն օր. 8 ժամից մինչև 9½ առաւօտեան,—դոկտոր Արտեմիէվ, 9½ ժամից մինչև 11 ժամ առաւօտեան,—դոկտոր Անանով։

Երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը, 11 ժամից առաւօտեան մինչև 12 ժամ,—դոկտոր Ալքանուս և դոկտոր Կապպելէր։

Չորեքշաբթի օրերը, 12 ժամին կէսօրի կօնսուլտացիա դոկտորների՝ Բէմմէրտ, Ալքանուս, Անանով և Արտեմիէվ։

BIBLIOGRAPHIA

CAUCASICA ET TRANSCAUCASICA

Опытъ

Справочнаго систематическаго каталога печатнымъ сочиненіямъ о Кавказѣ, Закавказіи и племенахъ, эти края населяющихъ.

составилъ

М. МІАНСАРОВЪ.

Томъ I. Отдѣлы I. и II. С. Петербургъ. Типографія О. И. Бакста, Гогенфельдена и К-° 1874—1876

Въ продажѣ у всѣхъ Тифлисскихъ книгопродавцевъ.

Цѣна 10 рублей

3 (3)

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ Դավրէժ քաղաքի Արամեան դպրոցի Հոգաբարձութիւնը հրաւիրում է մի վարժապետ նոյն դպրոցում դասատուութեան համար ռուսաց լեզուից, թուաբանութենից և աշխարհագրութենից։ Շաբաթական կուենեայ 20 դաս, իւրաքանչիւրն 1¼ ժամ, ամեն մէկ առարկայից դասերի թիւը կորոշէ դպրոցի տեսչութիւնը։ Ռոճկի և պայմանների մասին դիմել „Մշակի“ խմբագրատունը, կամ Շաղինովի քարվանսարայում պ. Ա. Մելիք-Ազարեանցի կանտորը։

Թիֆլիսից գրսում գտնուող ցանկացողները կարող են թղթակցութիւն ունենալ ուղղակի դպրոցի Հոգաբարձութեան հետ Դաւրէժ քաղաքում և իւրեանց պայմանները առաջարկել։

3 (5)

ՋԻՒՍԷՊՊԻ ՄԱՍԿԵՐՊԱ

շինում է փայտից շօրներ ամենայն տեսակ պատուհանների թէ տների և թէ մաղազինների համար, ներկում է և դնում է իւր տեղը։ Բաւականանում է չափաւոր վարձով։ Պատասխանատու է քամու դէմ դիմանալուն։

Հասցէն՝ Атаманская улица, домъ Зубалова, магазинъ Панцеръ.

2 (2)

ՄԱՆԳԼԻՍՈՒՄ առաջարկում են **ԴԱՍԵՐ**՝ մուզիկայի, զանազան առարկաների, և նոր լեզուների, նմանապէս հայոց։ Պատրաստում են երեխայոց ամենայն միջնակարգ ուսումնարանների համար, թէ օրիորդական և թէ տղայոց։

Հասցէն Մանգլիսում՝ կօնավալովի տուն, բօշչայի դէմուդէմ։

2 (4)

Հաղարներ անձինքներից երկու սեռի իրանց գեղեցիկ մազերով պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված ԲՈՒՍԱԿԱՆ ԹԻՆՕՎԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ, որ մազերը բուսնել է տալիս։ Այդ պօմադը բժշկական չատ հեղինակութիւններից փորձված է և ունի վկայական թղթեր պ. Կլեչինսկուց որ Վիէննայի Լանդգերիխտի քիմիայի պրոֆէսոր է և նոյնպէս Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատրութիւն. Նա ունէր մեծ աջողութիւն և վերջին ժամանակ հեռաղատած էր Մոսկվայի բժշկական վարչութենից որ տուեց նրան իր հաւանութիւնը. Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անդամ մազերից մերկ գլուխները ծածկվում են մազերով։ Այդ պօմադը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տալիս է բնական տեսք և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւնից մինն է, կարող է զարդարել ամենաչքեղ տուալէտի սեղանը։ Այդ բոլոր յատկութիւններիմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատեալի հասարակութենից լաւ ընդունելութեանվրա։

ԳԻՆԸ ՄԻ ՇԻՇԻ ՀԱՄԱՐ 2 ՐՈՒԲԼ

Իւրաքանչիւր շիշի հետ տրվում է և պօմադի գործածութեան նկարագրութիւնը։

ՊՕՄԱԴ

„PASTA EUGENIE“

Այդ պօմադի հնարող տիկինը որ յայտնվեցաւ «Pasta» անունով, պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան որ «Pasta Eugénie» այժմ ստացված է և ծախվում է Թիֆլիսում պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Արծրունու տանը, Վլադիկավկասում պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ Սաավրապօլում պ. ԿՈՒՐԻԼԶԷՆԿՕԻ մօտ, որտեղ ծախվում են և մնացած այստեղ յիշված արդիւնքները։ Այդ պօմադը նշանաւորվ նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը իսակվում է զանազան բիծերից,

անմաքրութիւններից և խոցերից և ստանում է երիտասարդական հասակին յատուկ թարմութիւնը և գեղեցկութիւնը։ Առաջարկվում է այն անձանց որք կամենում են խատակ և սպիտակ երեսի գոյնը ստանալ։ Հնարողը երաշխաւոր է պօմադի ներգործութեան հաստատութեան համար։ Գրական կարող են լինել առնողները համար և այն վկայագրերի որք ստացված են թէ Վիէննայի քիմիքոս պրոֆէսոր պ. Կլեչինսկուց, թէ Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատրութիւնը։

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Ր. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը։

Իւրաքանչիւր սրուակի վրա ինչպէս մազերի համար, այնպէս «Pasta» գտնվում է մի առանձին դրօշմ «Ամուրի» պատկերով և հնարողի ստորագրութեամբ որի վրա առնողներն խընդրում ենք դրսումնք ուշադրութիւն դարձնել։

Bertha Ries

Ց. Գ. «Pasta» պօմադը առաջարկվում է և նոցա, որք թէև չունեն զանազան վերև յիշված կաշու հիւանդութիւններ, բայց կամենում են ունենալ խատակ և թարմ երեսի, վզի և ձեռքերի գոյնը։

ՁԵՌՔԵՐԻ



ՊՕՄԱԴ

Այդ պօմադը այնպէս է պատրաստված, որ նրա գործածութենից յետոյ ձեռքերը ստանում են զարմանալի փափկութիւն և ոպիտակութիւն։

Սրուակի գինը 1 ր. 30 կոպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մոդ խարտեաշ, թէ սև, որ ներկում է 10 րօպէի միջոցում և չէ կորցնում իր տևողութիւնը 6 շաբաթվայ ընթացքում։ Արկղիկը 3 բուբլ։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ, հաստատ միջոց կոշտերի և կաշու կոշտութիւնների դէմ. Սրուակը 60 կ.։

20 (50)

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Դուրս եկաւ մամուլի տակից ոտանաւորով գրած փոքրիկ գրքոյկ այս վերնագրով. „Համառօտ Սօփերը Հայրենեաց գործքերի վրա“, աշխատասիրութիւն Սարգիս վարժապետ Փիլոյեանցի Նոր-Բայազդցու։ Գինն է 30 կոպ. գումարով առնողներին զեղչումն կը լինի։ Կը վաճառվի պ. պ. Էնֆիանջեանցի և Վարդանեանցի գրավաճառանոցներում։

Յանկացողները կարող են դիմել և հեղինակին այս հասցէով. Въ г. Новобаязетъ, Саркису Филоянцу.

ПРОДАЮТСЯ ДРОЖКИ. СОЛОЛАКИ. СТАРЫЙ Д. ПИТОЕВА.

ԾԱԽՎՈՒՄ Է ԴՐՕՇԿԱ, սօլոէակոմ, պ. Փիտօէվի հին տանը։

2 (3)

Տպագրութենից դուրս եկաւ վրացերէն գիրք „Նսեյջ ՁՁջՁնեջԹ Նեցն ԵՁ Նեցն ԵնջԹնեԹՁՁնն“ (առաջնորդ զանազան արհեստների), աշխատութիւն Միքայէլ Հախպատելեանց և ծախվում է պ. Զաքարիա Գրիգորեանցի և ընկերութեան գրավաճառանոցում, որ գտնվում է կուկիի կամրջի մօտ, Պրիկազի դէմ ու դէմ, Զուբալովի շինութիւններում և նմանապէս ծախվում է Էնֆիանջեանցի և ուրիշ գրավաճառանոցներում. գինն է 40 կոպ. Հարիւրով առնողին 10 կոպ. զեղչումն կը լինի։ Սորա հետ և դուրս եկաւ տպագրութենից և ծախվում է վրացերէն լեզուի օգնութեամբ ռուսաց լեզուի ուսուցանող անուամբ գիրք. գինն է 15 կոպ. Միքայէլ Հախպատելեանց։

Дозволено цензурою 16 Іюня 1876 г. Тифлисъ

Типографія Энфіаджіанцъ и К-°

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ